ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ- ԷԱՃԱՊՁԲ-18/5» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26 նոյեմբերի 2018թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Շաբոյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Հ. Թադևոսյան, Լ. Միքայելյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Շեկոյան

1. «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ- ԷԱՃԱՊՁԲ-18/5» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման վայրի, հայտերի ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /ընթացակարգի արդյունքների ամփոփման/ մասին.

1.1 Հայտ ներկայացնելու մասին՝ 2018թ նոյեմբերի 15-ին գնման ընթացակարգ է հրապարակվել www. *eauction.armeps.am* կայքում, ինչպես նաև հրավերը հրապարակվել է gnumner.am պաշտոնական կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ընդունման վերջնաժամկետ հաստատված է եղել մինչև 2018 թվականի նոյեմբերի 23-ը, ժամը՝ 11:00-ն: Հակադարձ աճուրդը սկսվել է սկսվել է 2018 թվականի նոյեմբերի 26-ին ժամը՝ 11:00-ին, ավարտվել է 11:30-ին www. *eauction.armeps.am* կայքի միջոցով:

1.3 Հայտեր էին ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի անվանումը	**Հայտերի գնահատման արդյունքները /համապատասխանելու դեպքում նշել "X"/**
«Կոտայքկոշ» ԲԲԸ	X
«ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ	X
«Աշխեն Քերոբյան» ԱՁ	X
«Միսմա » ՍՊԸ	X

2. ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով էլեկտրոնային աճուրդով կազմակերպված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրեց հետևյալը.

2.1 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/5» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից «Կոտայքկոշ» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած հավելված 1-ում առկա է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ:

3. ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար 2018թ. ընթացքում հանդերձանքի ձեռքբերման նպատակով էլեկտրոնային աճուրդ գնման ձևի միջոցով կազմակերպված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/5» ծածկագրով ընթացակարգի գնահատման ընթացքում հանձնաժողովը որոշեց.

3.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետով նիստը կասեցնել և eauction.armeps.am համակարգի միջոցով էլեկտրոնային ծանուցում ուղարկել «Կոտայքկոշ» ԲԲԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

3.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. նոյեմբերի 29-ին ժամը 12:00-ին, ք. Երևան, Կոմիտաս 49/2 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ ---------- Ա. Շաբոյան

Քարտուղար՝ ---------- Հ. Շեկոյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Հ. Թադևոսյան

2. ---------- Լ. Միքայելյան